



**«ԳԱՐՈՒՆ 2025»**

**03.03.2025 – 12.03.2025**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**Անցկացման վայր.**

ք. Երևան, Խանջյան 50, «Տ.Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոց»:

**Մասնակիցներ.**

Մասնակցում են ՖԻԴԵ-ի նույնականացման համար ունեցող 2-րդ և բարձր կարգային շախմատիստները:

**Մրցակարգ.**

Շվեյցարական մրցակարգ, 9 խաղափուլ:

**Ժամակարգ.**

Ժամակարգը՝ 90-ական րոպե մինչև խաղի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

**Մրցանակներ.**

1-3-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն գավաթներով, մեդալներով և դիպլոմներով:

Արդյունքները կուղարկվեն ազգային և միջազգային վարկանիշի հաշվարկի:

**Խաղացանկ.**

03 մարտ	1-ին խաղափուլ	ժ. 16.00
04 մարտ	2-րդ խաղափուլ	ժ. 16.00
05 մարտ	3-րդ խաղափուլ	ժ. 16.00
06 մարտ	4-րդ խաղափուլ	ժ. 16.00
07 մարտ	5-րդ խաղափուլ	ժ. 16.00
08 մարտ	6-րդ խաղափուլ	ժ. 16.00
09 մարտ	Հանգստյան օր	
10 մարտ	7-րդ խաղափուլ	ժ. 16.00
11 մարտ	8-րդ խաղափուլ	ժ. 16.00
12 մարտ	9-րդ խաղափուլ	ժ. 16.00

### **Լրացուցիչ ցուցանիշներ**

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակային տեղերը կորոշվեն ըստ՝

- հատված Բուխհոլցի -1 ցուցանիշի
- Բուխհոլցի ցուցանիշի
- սև խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն թվի

### **Մուտքավճարներ**

Մրցաշարի մասնակիցները պետք է գրանցվեն նախապես՝ կատարելով փոխանցում (4000 ՀՀ դրամի չափով) հետևյալ բանկային հաշվին՝

**«Շախմատի հայկական ասոցիացիա» Հ/Կ**

**“ԱՐԱՐԱՏ” ԲանկԲԲԸ**

**Հ/Հ 1510006712982908**

Նպատակը դաշտում նշել՝ «Գարուն - 2025» մրցաշարի մուտքավճար, անուն,  
հայրանուն, ազգանուն, հեռախոսահամար, ՖԻԴԵ ID: